ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ

«20» հոկտեմբերի 2016թ. № 204-Ա

# ՀՐԱՄԱՆ

## ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 10-ի թիվ 224-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով հաստատված՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 18-րդ կետի 12-րդ ենթակետով՝ հարկային ու մաքսային վարչարարության բարեփոխումներին աջակցելու և հարկային ու մաքսային վարչարարության հարցերով պետության, գործարար համայնքի ու հասարակական հատվածի միջև արդյունավետ երկխոսություն ապահովելու նպատակով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1) ստեղծել եկամուտների վարչարարության բարեփոխումների հասարակական խորհուրդ,

2) հաստատել եկամուտների վարչարարության բարեփոխումների հասարակական խորհրդի կազմը՝ համաձայն հավելվածի,

3) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Վ. Միրումյանին՝

սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո՝ տասնօրյա ժամկետում, կազմակերպել եկամուտների վարչարարության բարեփոխումների հասարակական խորհրդի առաջին նիստը՝ օրակարգում ընդգրկելով նաև խորհրդի աշխատակարգի նախագծի քննարկման հարցը:

Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտեի նախագահի
2016 թվականի հոկտեմբերի 20-ի N 204-Ա հրամանի

# ԿԱԶՄ
# ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

1. Վարդան Հարությունյան - ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահ (խորհրդի նախագահ)
2. Արմեն Ալավերդյան - ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի առաջին տեղակալ
3. Արթուր Աֆրիկյան - ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի առաջին տեղակալ
4. Վախթանգ Միրումյան - ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի տեղակալ
5. Արմեն Սաքապետոյան - ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի տեղակալ
6. Ռոբերտ Գալոյան - ՀՀ ԿԱ ՊԵԿ օպերատիվ հետախուզության վարչության պետ
7. Միքայել Փաշայան - ՀՀ ԿԱ ՊԵԿ տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության պետ
8. Արման Պողոսյան - ՀՀ ԿԱ ՊԵԿ վարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի և սպասարկման վարչության պետ
9. Գևորգ Սաղոյան - ՀՀ ԿԱ ՊԵԿ մաքսային հսկողության վարչության պետ
10. ՀՀ Նախագահի աշխատակազմի ներկայացուցիչ (համաձայնությամբ)
11. ՀՀ հանրային խորհրդի ներկայացուցիչ (համաձայնությամբ)
12. Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնի ներկայացուցիչ (համաձայնությամբ)
13. Հայաստանի հաշվապահների և աուդիտորների ասոցիացիայի ներկայացուցիչ (համաձայնությամբ)
14. Հայաստանի ՓՄՁ հաշվապահների ասոցիացիայի ներկայացուցիչ (համաձայնությամբ)
15. Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության ներկայացուցիչ (համաձայնությամբ)
16. Հայաստանի բանկերի միության ներկայացուցիչ (համաձայնությամբ)

17. Հայաստանի գործատուների հանրապետական միության ներկայացուցիչ (համաձայնությամբ)
18. Հայաստանի Հանրապետության առևտրաարդյունաբերական պալատի ներկայացուցիչ (համաձայնությամբ)
19. Հայաստանում Ամերիկայի առևտրի պալատի ներկայացուցիչ (համաձայնությամբ)
20. «Հարկ վճարողների պաշտպանություն» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ (համաձայնությամբ)
21. «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ (համաձայնությամբ)
22. Փոքր և միջին բիզնեսի հիմնադրամի ներկայացուցիչ (համաձայնությամբ)
23. ՀՀ Ռազմավարական ծրագրերի քաղաքացիական համագործակցության ցանց, «Այլընտրանք» հետազոտական կենտրոն» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ (համաձայնությամբ)
24. ՎԶԵԲ Գործարար աջակցության գրասենյակի նեկայացուցիչ (համաձայնությամբ, խորհրդակցական ձայնի իրավունքով)
25. Եվրոպական բիզնես ասոցիացիայի ներկայացուցիչ (համաձայնությամբ, խորհրդակցական ձայնի իրավունքով)
26. «Քեյ-փի-էմ-ջի Արմենիա» ՓԲԸ-ի ներկայացուցիչ (համաձայնությամբ, խորհրդակցական ձայնի իրավունքով)
27. «Էրնսթ ընդ յանգ» ՓԲԸ-ի ներկայացուցիչ (համաձայնությամբ, խորհրդակցական ձայնի իրավունքով)
28. «ՓրայսուոթերհաուսԿուպերս Սենթրալ Այժա ընդ Կովկասիս Բի. Վի.» ընկերության հայաստանյան մասնաճյուղի ներկայացուցիչ (համաձայնությամբ, խորհրդակցական ձայնի իրավունքով)
29. «Դելոյթ Արմենիա» ՓԲԸ-ի ներկայացուցիչ (համաձայնությամբ, խորհրդակցական ձայնի իրավունքով)
30. Համաշխարհային բանկի երևանյան գրասենյակի ներկայացուցիչ (համաձայնությամբ, խորհրդակցական ձայնի իրավունքով)
31. Արժույթի միջազգային հիմնադրամի հայաստանյան ներկայացուցչության ներկայացուցիչ (համաձայնությամբ, խորհրդակցական ձայնի իրավունքով)
32. ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչ (համաձայնությամբ, խորհրդակցական ձայնի իրավունքով)